## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Սեպտեմբերի 3-ին, չորեքշաբթի.**—Այսօր Բյուրականի «Հայկաշեն» Հայրապետական ամառանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ աբեղա հայրերի հավաքույթ:

*
* *

**Սեպտեմբերի 7-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Հավատամք ի մի Աստուած. ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի» (Հանգանակ Նիկիական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 10-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հավաքույթ:

*
* *

**Սեպտեմբերի 14-ին, կիրակի.—Խաչվերաց:**

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ 14) բնաբանով (տես էջ 35):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Նույն օրը,** երեկոյան ժամը 18.30-ին, կատարվեց «Թափօր Խաչվերացի» ավանդական հանդիսությունը՝ գլխավորությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլապալյանի:

*
* *

**Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի դիվանապետ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Մութաֆյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

**Սեպտեմբերի 16-ին, երեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսու-

թյունների դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի դիվանապետ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Մութաֆյանի և ուսանողության միջև:

Հանդիպման բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը՝ ուսանողությանը ներկայացնելով հոգեշնորհ հայր սուրբին:

Ապա, խոսք առնելով, Տ. Մեսրոպ ծ. վրդ. Մութաֆյանը ուսանողներին ծանոթացրեց Կ. Պոլսի Աթոռի կրոնա-մշակութային ու վարչական գործունեության մասին: Ընդհանուր գծերի մեջ ներկայացրեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական Աթոռի պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը, որից հետո սիրով պատասխանեց ուսանողների և ներկաների հարցերին:

Հանդիպումն անցավ ջերմ և սիրալիր մթնոլորտում:

* * *

**Սեպտեմբերի 19-ին, ուրբաթ.**—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը: Պատրիարք Հորը դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները:

* * *

**Սեպտեմբերի 20-ին, շաբաթ.**—Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Մեսրոպ ծ. վրդ. Մութաֆյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էին Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, ինչպես նաև Կ. Պոլսից ժամանած բազմաթիվ հայ ուխտավորներ:

* * *

**Սեպտեմբերի 27-ին, շաբաթ.—Սրբոյ Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեցողին:**

Այսօր Երևանի Ս. Գևորգ եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազան հայրը քարոզ խոսեց՝ «Լցված լի սիրով և հարստացած ամենայն բարի գործերով» բնաբանով:

Իր խոսքի մեջ Տ. Զավեն սրբազանը ասաց, որ հաջորդ օրը, կիրակի, նշվելու է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության երեսունմեկերորդ տարեդարձը: Այս բարեբաստիկ առիթով, պատարագիչ սրբազանը մաղթանքներ արեց Վեհափառ Հայրապետի առողջության և կենաց արևշատության համար: Ապա բացատրեց Տերունական տոների իմաստը, որոնք կոչվում են Տաղավար: Առաջինը՝ Քրիստոսի հայտնությունը և յարմնավորությունը, ասաց սրբազան հայրը, բերում են մարդկությանը խաղաղություն. մարդիկ եղբայրանում են, որդեգրվելով Աստծու կողմից: Ընդունելով որդեգրության պատիվը, ժառանգորդ են լինում հավիտենական կյանքի: Քրիստոսի հարությամբ, մարդիկ մեղքերից ազատվելով՝ երաշխավորվում են փրկությամբ:

Այնուհետև սրբազան հայրը հավատացյալներին բացատրություններ տվեց Այլակերպության, Սուրբ Կույս Մարիամի և յոթ տոների, ինչպես նաև Ս. Խաչի չորս տոների մասին՝ ասելով, որ հաջորդ օրը, կիրակի, Հայաստանյաց բոլոր եկեղեցիներում հանդիսադրվելու է Վարագա Ս. Խաչի տոնը: Մինչ խաչի երեք տոները՝ Երևման, Վերացման, Գյուտ Խաչի, տոնվում են քրիստոնյա բոլոր եկեղեցիներում, ապա Վարագա Ս. խաչի տոնը հատուկ է միայն Հայ Եկեղեցուն:

Ապա պատարագիչ սրբազան հայրը իր քարոզի մեջ անդրադարձավ օրվա տոնի իմաստին, ներկայացնելով Գևորգ քաջամարտիկ զորավարի և նրա ընկերների՝ Քրիստոսի Եկեղեցու համար նահատակության պատմությունը, որը օրինակ կարող է ծառայել ամեն մի քրիստոնյայի համար: Քարոզի վերջում պատարագիչ սրբազանը հավատացյալներին մաղթեց, որ լցվեն Աստվածային սիրով և Սուրբ Հոգու շնորհներով պսակավորվեն և իրենց առաքինություններով փառավորեն Ամենասուրբ Երրորդությանը:

* * *

**Սեպտեմբերի 30-ին, երեքշաբթի.**—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հանդիպում Կ. Պոլսի Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի և ուսանողության միջև:

Հանդիպման ընթացքում Ամենապատիվ Սրբազան Հայրը հանգամանորեն խոսեց Ս. Մկրտության խորհրդի մասին: Վերջում Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը սիրով պատասխանեց ուսանողների հարցերին;